


## ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



2013թ. մարտի 10-ին մահացավ Սուրեն Խաչատուրի Ավդալբեկյանը՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մ. Հերացու առաջին մեդալակիր, ԽՍՀՄ ԱՆ Բժիշկների կատարելագործման Երևանի պետական ինստիտուտի (այժմ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ) հիմնադիր, հայկական վիրաբուժության հանրաճանաչ դասականը: Կյանքից հեռացավ մարդ, որն իր ողջ կյանքը նվիրել էր մարդկանց բժշկելուն, բժշկական կրթությանը և գիտությանը, իր երկրի առողջապահության զարգացմանը:

Սուրեն Ավդալբեկյանը ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը 1943թ.: Դեռ ուսանողական տարիներին նա սկսեց տարվել վիրաբուժությամբ և հետաքրքրություն ցուցաբերեց գիտական աշխատանքի նկատմամբ: Դրա նախադրյալներն էին աննախադեպ բնական տաղանդը, մեծ աշխատասիրությունը և սերը բժշկության հանդեպ:

Ս. Ավդալբեկյանի բժշկական գործունեության սկիզբը համընկավ ամենաձանր՝ Հայրենական Մեծ պատերազմի տարիների հետ: Լինելով Մոսկվայի ռազմական շրջանի էվակոհոսպիտալի առաջատար վիրաբույժ, Ս. Ավդալբեկյանը ցուցաբերեց ծառայության ղեկավարի մեծագույն պատասխանատվություն, վիրաբույժի վարպետություն, ուշադրություն, բարություն և կարեկցանք հիվանդների նկատմամբ:

Զորացրումից հետո, 1945թ.-ից Սուրեն Ավդալբեկյանն աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտի ֆակուլտատիվ վիրաբուժության կլինիկայում: Լինելով օրդինատոր-վիրաբույժ, գործնական գործունեության հետ մեկտեղ պարապում էր ուսանողների հետ և անցկացնում գիտական հետազոտություններ: 1948 թ.-ից նա սկսեց զբաղվել ինտուբացիոն նարկոզով և հանդիսանում է հանրապետությունում էնդոտրախեյլ նարկոզի ներդրման պիոները:

1949թ. Ս. Ավդալբեկյանն առաջիններից էր, որ արձագանքեց հեռավոր շրջաններից մեկուսված վիրաբուժական ծառայության բարձրաց-

ման վերաբերյալ Հայրենիքի կանչին և ինքնական մեկնեց Ղափանի շրջան, որտեղ աշխատում էր գլխավոր բժիշկ և վիրաբուժական բաժանմունքի վարիչ:

Արդեն լինելով փորձառու մասնագետ նա կատարեց մեծ և պտղաբեր աշխատանք՝ խոշորագույն լեռնահանքային կոմբինատի բանվորներին և ինժինեռատեխնիկական անձնակազմին և ողջ շրջանի բնակչությանը բուժ-կանխարգելիչ և մասնագիտացված բժշկական օգնության ցուցաբերման ուղղությամբ: Համեմատաբար կարճ ժամկետում նա կարողացավ բարձր մակարդակի բարձրացնել շրջանի վիրաբուժական ծառայությունը:

1951թ. Ս. Ավդալբեկյանը վերադառնում է Երևան, որտեղ պրոֆեսոր Ռ.Հ.Յոյանի ղեկավարությամբ կատարում է առաջին քայլերը դեռ չհետազոտված կրծքային վիրաբուժության ոլորտում և առաջինը Հայաստանում ներդնում է էնդոտրախեալ նարկոզը:

1952թ. Ս. Ավդալբեկյանը մրցույթով ընդունվում է աշխատանքի Երևանի բժշկական համալսարանի ֆակուլտատի վիրաբուժության ամբիոն: Մոսկվայում ՄՈՆԻԿԻ-ում՝ պրոֆեսոր Բ.Է.Լիմբերգի կլինիկայում մասնագիտացումից հետո իր բոլոր գիտելիքները և ունակությունները Ս. Ավդալբեկյանն օգտագործել է ի բարօրություն իր երկրի:

Սկսած 1951թ.-ից Ս. Ավդալբեկյանը պլանաչափ զբաղվում է կրծքային վիրաբուժությամբ և նրան գրավում է այդ ժամանակ հանրապետությունում թոքերի տարածված էխինոկոկոզի բուժման խնդիրները:

Ամփոփելով բազմամյա գիտագործնական գործունեության փորձը, Ս. Ավդալբեկյանը 1956թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ «Թոքի հիդատիդոզ էխինոկոկ» թեմայով և 1968թ.՝ դոկտորականատենախոսություն՝ «Բրոնխոէկտազների ֆունկցիոնալ հետազոտման և վիրաբուժական բուժման ժամանակակից հարցերը» թեմայով:

Դժվար է թվարկել ինչ է կատարվել նրա կողմից առաջին անգամ՝ թոքերի ռեզեկցիա, միջնորմի վիրահատություն, էլետրոստիմուլյատորի ներդնում սրտի մեջ, թոքերի խոռոչների տրանսպարիտալ կաթետերավորում, ենթաստամոքսային գեղձի բջիջների փոխպատվաստում և այլն:

Գիտության մեջ մեծ ավանդ ունեն Ս. Ավդալբեկյանի աշխատանքները նվիրված սրտի էլեկտրամեխանիկական ակտիվությանը, սրտի լայնակի բլոկադայով հիվանդների էլեկտրոստիմուլյացիայի ուսումնասիրմանը, թոքերի կոմպենսատոր պրոցեսների ձևաբանության, արյան մակարդման և ֆիբրինոլիտիկ համակարգերի, անգիո-

պուլմոնոգրաֆիայի եղանակով արյան փոքր շրջանառության, արտաքին շնչառության ֆունկցիայի հետազոտմանը: Առաջին անգամ ԽՍՀՄ-ում կիրառել է թոքերի սուր թարախակույտերի խոռոչների տրանսպարիետալ կաթետերավորում:

Վարպետության աճի հետ զուգահեռ Ս.Ավդալբեկյանը քաջ գիտակցում էր, որ եթե բժիշկը մշտապես չի կատարելագործվում, չի կարող բավարարվել ինստիտուտում ստացած գիտելիքներով: Եվ Ս. Ավդալբեկյանը հանդիսացավ ԵրՊԲԻ-ին կից բժիշկների կատարելագործման ֆակուլտետի ստեղծման նախաձեռնողներից մեկը և նշանակվեց ֆակուլտետի ղեկան:

1958թ.-ից Սուրեն Խաչատուրի Ավդալբեկյանի անունը սերտորեն կապված է հետդիպլոմային կրթության հետ՝ սկզբում բժիշկների կատարելագործման ֆակուլտետում, ապա Բժիշկների կատարելագործման Երևանի պետական ինստիտուտում:

Կարճ ժամանակաշրջանում ԵրՊԲԻ-ին կից Ս.Ավդալբեկյանի ղեկավարությամբ ֆակուլտետը դարձավ միութենական նշանակության հզոր գիտամանկավարժական կենտրոն, բարձր որակավորմամբ կադրերի դարբնոց, որտեղ կատարելագործվում էին ոչ միայն նախկին Խորհրդային Միության բժիշկները, այլև պատրաստվում էին մասնագետներ, գիտության դոկտորներ և թեկնածուներ Հայաստանի համար:

Ս.Խ.Ավդալբեկյանի ծառայությունները բարձր է գնահատել ԽՍՀՄ և Հայաստանի կառավարությունը: Նա պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր դրոշի», «Փառքի նշան» շքանշաններով, վեց մեդալներով, պատվոգրերով, կրում էր «Հայկական ԽՍՀ վաստակավոր բժիշկ» պատվավոր կոչումը:

Հանրապետության, ժողովրդի առջև ունեցած վաստակի համար Հայաստանի Առողջապահության ազգային ինստիտուտը, Ա.Լ.Միքայելյանի վիրաբուժության ինստիտուտի կրծքային բաժանմունքը, «Շտապ օգնության» ԳԲԿ-ի կրծքային և երկու վիրաբուժական բաժանմունքները, որտեղ նա աննկուն աշխատում էր առ այսօր, կրում են ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի պատվավոր անունը:

Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի հիշատակը մշտապես վառ կմնա իր աշխատակիցների, հիվանդների և աշակերտների սրտերում:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**

**ՀՀ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրություն**